ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. N - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԴԱՎԹԱՇԵՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ Հ.22 ՇԵՆՔԻ Հ. 61 ԲՆԱԿԱՐԱՆԸ
ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Դավթաշենի 2-րդ թաղամասի հ.22 շենքի հ.61՝ 19.0 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 16.06.2011թ. հ.2652217 վկայական) նվիրել Խաչիկ Քոչարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴԱՎԹԱՇԵՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ Հ.22 ՇԵՆՔԻ Հ. 61 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դավթաշենի թաղապետի 1998 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 39 որոշմամբ Դավթաշենի 2-րդ թաղամասի 22 շենքի 2-րդ մուտքի 12 քմ ոչ բնակելի տարածքը որպես խորդանոց հատկացվել է Արցախյան ազատամարտիկ Խաչիկ Քոչարյանին:

Հատկացված տարածքը Խաչիկ Քոչարյանի կողմից օգտագործվում է 1998 թվականից առ այսօր: Նշված տարիների ընթացքում Խաչիկ Քոչարյանի կողմից՝ իր միջոցներով, վերոնշյալ տարածքում իրականացվել են շինարարական, վերանորոգման աշխատանքներ և օգտագործվել է որպես բնակելի տարածք:

2011 թվականի հունիսի 16-ին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի <<Դավթաշեն>> ստորաբաժանման կողմից նշված տարածքի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում, համաձայն որի՝ այն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման հ.2652217 վկայականը):

Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 17-ի N1856-Ա որոշմամբ Դավթաշենի 2-րդ թաղամասի հ.22 շենքի հ. 61 տարածքը դասակարգվել և հաշվառվել է որպես բնակելի:

Հաշվի առնելով, որ Խաչիկ Քոչարյանը հանդիսանում է Արցախյան ազատամարտիկ, և որ նշված տարածքը 1998 թվականից առ այսօր փաստացի, բարեխղճորեն օգտագործվում է նրա կողմից, <<Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամաս հ.22 շենքի հ. 61բնակարանը նվիրելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴԱՎԹԱՇԵՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ Հ.22 ՇԵՆՔԻ Հ. 61 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամաս հ.22 շենքի հ.61բնակարանը նվիրելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴԱՎԹԱՇԵՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ Հ.22 ՇԵՆՔԻ Հ. 61 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամաս հ.22 շենքի հ.61 բնակարանը նվիրելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ